

Նարուէռնի դէմ մեքենայած խեցեվը-
ճիռն ալ կրցաւ արգիլել որ կայսրու-
թիւնն նորէն չկանգնի . և սակայն , որ-
չափ հեռու ենք այն որոշուած մեծա-
մեծ խնդիրներէն , այն հանդարտած
կիրքերէն , և այն օրինաւոր հաճոյքնե-
րէն , որոնք տրուած էին ժողովրդոց , ա-
ռաջին կայսրութեան ձեռքով :

Այսպէս , 1815էն ետքը , ամեն օր
կը ճշմարտի Ս . Հեղինէի գերւոյն այս
մարգարէութիւնս . « Ո՞րքան կոիւներ ,
արեանհեղութիւնք և տարիներ զեռ
պէտք են , որպէս զի այն բարիքն զոր
կը ցանկայի մարդկութեան համար՝
յարդիւնս գան » :

Խորոշիւն ծովոց .

Հին և նոր աշխարհքն ու երկրագնատիս այլ և
այլ մասունքն իրարու հետ կապելու համար՝ ձը-
գուած ու ձգուելիք ելեկտրական թելց պատ-
ճառաւ եղած չափունքն՝ ընդհանուր գաղափար
մը կու տան ծովոց համեմատական խորութեա-
նը : Հասարակօրէն ցամաքաց մօտերը նուազ խո-
րութիւն ունին ծովերը . ինչպէս Պալդիկ ծովս
ընդ մէջ գերմանիոյ և Շուետաց ծովափանցն
իբր 120 անգլիական ոտք խորութիւն ունի . Ա-
գրիականն ընդ մէջ Վենետիկոյ և Դրեստի՝ 150
ոտք : Ընդ մէջ Գաղղիոյ և Անգլիոյ մեծագոյն խո-
րութիւնը ծովուն 500 ոտքը չանցնիր , մինչդեռ
հարաւային արևմտեան մասն աւելի քան 2000
ոտք խորութիւն ունի :

Եւրոպիոյ հարաւային ծովերն աւելի խոր են
քան թէ ներքին ծովերն : Ճիակիլդերրայի նեղու-
ցին անձկագոյն մասին խորութիւնն է իբր 1000
ոտք , և դէպ ՚ի արևելք այս խորութիւնն է 3000
ոտք : Սպանիոյ ծովափունքն ինչուան 6000 ոտք
խորութիւն ունին : Բարեյուսոյ Գլխուն արևմտ-
տակողմն ինչուան 16000 ոտք խորութիւն գըտ-
նուեր է , և Ս . Հեղինէ կղզւոյն արևմտակողմն
27000 ոտք : Հեղինակ մը կը համարի Ատլանտա-
կանին միջին խորութիւնը 55000 ոտք , և Խաղա-
ղականինը 30000 ոտք :

ԲԻԶՉՈՒԱԼՈՒ

ԺԱ

Շառնէ ծաղկին նկատմամբ ըրած
խուզարկու փորձերն առաջ տանելով
օր ըստ օրէ աւելի կը զմայլէր բնութեան
կանոնաւոր հրաշալեացը վրայ . բայց
չէր կրնարնուրը ու անտեսանելի գաղտ-
նեաց խորը թափանցել , ու անկարու-
թեանը վրայ կը զարմանար , երբ լու-
դուիկ դրացի իտալացի դաւաճանին
կողմանէ ապակիէ մեծ ոսպնաձև մը բե-
րաւ , որով անիկա ճանձին եղիներկիին
վրայ ութը հազար տեսողական ոսպ-
նաձևներ (Facettes oculaires) կրցեր էր
համրել : Շառնէ սաստիկ ուրախացաւ :

Այս գործիքով բուսակին նկնատե-
սիլ մասերուն տարածոցը սովորակա-
նէն հարիւրապատիկ աւելի մեծցած
երևան աչքին : Ան ատեն սկսաւ , կամ
կարծեց մեծամեծ գիւտեր ընել :

Ծաղկին արտաքին ծրարը մանրա-
մասնաբար հետազոտեց . հասկրցաւ
թէ բլթակներուն պայծառ գոյնը , ձեր ,
կարմիր պիսակները , թաւիչէ կամ
փալիլուն կերպասեայ երիզներն որ չորս
բոլորտիքը կը պճնէին կամ խարիսխը
կը զարդարէին՝ պարզ տեպրով աչք զը-
ւարձացնելու համար չէին , այլ նաև
ծաղկին պիտոյիցն համեմատ արեւու
ճառագայթները բաժնելու կամ ան-
դրադարձնելու , և անոնց ուժը մեղմա-
ցնելու կամ զօրացնելու համար , որով
պտղաբերութեան գործոյն ձեռնտու
կը լլային :

Յախճապակեայ փայլունութեամբ
շողջողացող օծեալ թիթեղներն՝ ան-
շուշտ ծծող անօթներու գեղձական կոյ-
տեր են , որոնք հատիկները սնուցա-
նելու համար՝ օդ , լոյս ու խոնաւ շոգի-
ներ կը ծծեն . վասն զի առանց լրտայ
գոյն չկայ , առանց օդոյ և ջերմութեան
ալ կեանք չկայ : Խոնաւութիւն , ջեր-
մութիւն և լոյս , ասոնցմէ կը բաղկա-